ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/311

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Մ. Մկրտչյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԾՁԲ-21/124» գնանշման հարցման ընթացակարգ, համայնքային ծառայողների մասնագիտական վերապատրաստման ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/124»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.11.2021թ.-ի թիվ 26/26-1/17957-2021 գրությամբ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 27.10.2021թ.-ի թիվ 01/06-26290 գրության հիման վրա, 03.11.2021թ.-ին «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 03.11.2021թ.-ին:

03.11.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/311 համարի ծածկագիրը:

10.11.2021թ.-ին, 17.11.2021թ.-ին և 03.12.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 17.11.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.12.2021թ.-ին:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 27.10.2021թ.-ի թիվ 01/06-26290 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի միջև 29.04.2021 թվականին կնքած «ԵՔ-ԳՀԾՅԲ-21/124» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համայնքային ծառայողների մասնագիտական վերապատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի

(այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հանվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի 4-րդ չափաբաժնի մասով նախատեսված է եղել համայնքային ծառայողների վերապատրաստումը ընդհանուր և իրավական հարցերի բնագավառի վերաբերյալ ծառայության մատուցումը: Համաձայն տեխնիկական բնութագրի մասնագիտական ուսուցման ծրագրի ընդհանուր տևողությունը պետք է կազմեր առնվազն 72 ժամ, սակայն ընկերության կողմից մատուցած ծառայությունները չեն համապատասխանել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պայմաններին (դասընթացը չի գերազանցել 32 ժամը), ինչը փաստում է վերապատրաստման գործուղված աշխատակիցների բացատրագրերը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ՄՌԿ վարչության մրցույթների և ատեստավորման կազմակերպման բաժնի պետի սույն թվականի հոկտեմբերի 19-ին կատարած այցը «Մաստեր Սթայլ» ընկերություն վերապատրաստման դասընթացի ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով,ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3.1 կետի «ա» ենթակետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

ՀՀ քաղաքացիական օրեսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույատրփսմ է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի, պայմանագրի 4-րդ չափաբաժնի մասով հրաժարվել է կնքված պայմանագրից՝ համարելով այն 625.000 ՀՀ դրամի չափով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվել է ՀՀ գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերությանը «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սամանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմնի:

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի պահանջներով, առաջարկում եմ Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Միաժամանակ, կից Ձեզ են տրամադրվում Պայմանագրի, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցման և Պայմանագիրը միակողմանի լուծելու համար հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճենները:»:

3. <u>«Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 03.11.2021թ.-ին գրությամբ դիմել է «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.11.2021թ.-ի թիվ 26/26-1/17957-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 10.11.2021թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում Երևանի քաղաքապետարանի (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետև նաև՝ Ցուցակ)

ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՅ-ԼՕ-2021/311 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել գրություն (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր):

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրանց դեմ:

1. Գրավոր դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը

1.1. Երևանի քաղաքապետարանի և «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի ապրիլի 23-ին կնքվել է ԵՔ-ԳՀԾՁԲ-21/124 համարով պետական գնման ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետև նաև՝ Պայմանագիր):

1.2 Պայմանագրի 4-րդ չափաբաժնով՝ համայնքային ծառայողների վերապատրաստման ընդհանուր և իրավական հարցերի բնագավառ ծառայությունների մատուցման սկիզբ է համարվում՝ Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչը 25.12.2021թ.-ը:

Վերոնշյալ չափաբաժնի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

«... Վերապատրաստումը պետք է իրականացվի խմբային ուսուցման ձևով, խումբը պետք է բաղկացած լինի առավելագույնը 23 անձից, ժամը 9:00-ից մինչև 17:00-ն ընկած ժամանակահատվածում (ընդմիջումներ՝ 10 րոպե, ժամը 12:00-ից հետո՝ 1 անգամ ընդմիջում 30 րոպե): Հավելված 4-ով ներկայացված ծրագրով պետք է վերապատրաստվի մինչև 45 համայնքային ծառայող: Ծառայության դիմաց վճարումը կատարվելու է դասընթացներին փաստացի մասնակցած համայնքային ծառայողների հաշվարկով, իսկ հեռավար եղանակով վերապատրաստումն անցկացնելու դեպքում՝ դասընթացներին փաստացի մասնակցած համայնքային ծառայողների հաշվարկով առաջարկված միավորի գնից 15%-ով պակաս:...»

1.2. Պատվիրատուն 2021 թվականի հոկտեմբերի 26-ին www.gnumner.am կայքում հրապարակել է Երևանի քաղաքապետարանի և «Մաստեր Սթայլ» ՍՊ ընկերության միջև 29.04.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/124» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին ծանուցում:

2. Պատվիրատուի Գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

2.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից:

Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների հաշվառման նպատակով պետական բյուջեի և պետական բյուջեից դրամաշնորհի, այդ թվում՝ սուբվենցիայի ձևով հատկացվող միջոցների հաշվին գնման պայմանագիր կնքելուց կամ գնման գործընթացը չկայացած հայտարարվելուց հետո՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն լիազորված մարմին է ներկայացնում հաշվետվություն՝ գնման գործընթացի մասին:

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ) 110-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն.

3) եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝

ա. դրական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարն էլեկտրոնային ստորագրությամբ

հաստատում և էլեկտրոնային համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է ուղարկում հանձնման-ընդունման արձանագրությունը և եզրակացությունը, որոնք վերջինս 1 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով տրամադրում է պայմանագիր կնքած անձին,

բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Կարգի 111-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 109-րդ կետով նախատեսված գրավոր եզրակացության ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Պայմանագրի.

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համայնքային ծառայողների մասնագիտական վերապատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

2021 թվականի հոկտեմբերի 26-ին www.gnumner.am կայքում հրապարակված Երևանի քաղաքապետարանի և «Մաստեր Սթայլ» ՍՊ ընկերության միջև 29.04.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/124» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին ծանուցմամբ Պատվիրատուն նշել է, որ «… Պայմանագրի 4-րդ չափաբաժնի մասով նախատեսված է եղել Համայնքային ծառայողների վերապատրաստումը ընդհանուր և իրավական հարցերի բնագավառի վերաբերյալ ծառայության մատուցումը: Համաձայն տեխնիկական բնութագրի մասնագիտական ուսուցման ծրագրի ընդհանուր տևողությունը պետք է կազմեր առնվազն 72 ժամ, սակայն ընկերության կողմից մատուցած ծառայությունները չեն համապատասխանել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պայմաններին (դասընթացը չի գերազանցել 32 ժամը), ինչը փաստում է վերապատրաստման գործուղված աշխատակիցների բացատրագրերը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ՄՌԿ վարչության մրցույթների և ատեստավորման կազմակերպման բաժնի պետի սույն թվականի հոկտեմբերի 19-ին կատարած այցը «Մաստեր Սթայլ» ընկերություն վերապատրաստման դասընթացի ընթացքում:…»

Այս կապակցությամբ ցանկանում ենք նշել, որ Պատվիրատուի կողմից վերը նշվածը չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կողմից իրականացված դասընթացները տեսաձայնագրվել է համապատասխան համակարգի միջոցով, ինչի վերաբերյալ ապացույց կներկայացվի Բողոքներ քննող անձին: Այդ տեսաձայնագրություններից պարզ երևում է անցկացված դասընթացի տևողությունը:

Պատվիրատուն որպես իր գրածի ապացույց ներկայացրել է մի քանի զեկուցագրեր, սակայն այդ զեկուցագրերում, չի նշվում կոնկրետ որ օրը իրականացված դասընթացն է սկսվել ուշացումով և ավարտվել նախատեսված ժամկետից շուտ, թե առհասարակ բոլոր

դասընթացներն են սկսվում ուշ և ավարտվում շուտ: Տեսաձայնագրություններում առկա է այնպիսի տեղեկատվություն, որ օրինակ՝ դասընթացը վարողը ժամանակին միացել է համապատասխան համակարգին 09:00-ին, սակայն նախատեսված մասնակիցները միացել են շատ ավելի ուշ, կամ ընդհանրապես չեն մասնակցել: Հարց է առաջանում նաև, թե իրականացված որ դասընթացի ժամանակ համապատասխան դասընթացը անցկացնողի կողմից ինչ բացթողումներ են եղել, արդյոք դրանց մասին տեղեկացվել է «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի ղեկավար կազմին, եթե տեղեկացվել է, ապա արդյոք տեղեկացվելուց հետո չեն շտկվել թերությունները և նմանատիպ խնդիրներ, որոնք առկա են Պատվիրատուի կողմից ուղարկված զեկուցագրերում:

Ցանկանում ենք հատուկ անդրադառնալ քաղաքացիական սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ Անի Հայրապետյանի կողմից գրված զեկուցագրին: Մասնավորապես, նա նշել է որ 9 օրերին պատշաճ մասնակցել է դասընթացներին, սակայն մասնակցության վկայական չի տրվել նրան: Այս մասով «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն կներկայացնի ապացույց, որ Անի Հայրապետյանը ընդամենը երկու անգամ է մասնակցել դասընթացներին, ինչի պատճառով, այո, վերջինիս չի տրվել մասնակցության վկայական: Այսինքն այս զեկուզագրում նշվածը ամբողջությամբ չի համապատասխանում իրականությանը:

Ցանկանում ենք Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրել նաև այն հանգամանքի վրա, որ Պատվիրատուն Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին գրավոր կերպով չի տեղեկացրել դասընթացների անցկացման «ենթադրյալ» խախտումների մասին, ուստի և չի սահմանել ողջամիտ ժամկետ այն անհամապատասխանությունները շտկելու համար, իսկ Պայմանագիրը կողմերի միջև լուծվել է մատուցված ծառայությունը պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ, ուստի և գտնում ենք, որ այդ հիմքով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին որոշումը իրավաչափ չէ:

Սակայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված ընթացակարգը մերժելու հիմնական հիմքը հանդիսանում է այն, որ Կարգի 110-րդ կետի համաձայն՝ գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին պետք է տրամադրեր էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն: Բացասական եզրակացություն տալու պարագայում, նույն եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին: Վերոնշյալ գրավոր եզրակացության ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը: Ուստի այս պարագայում Պատվիրատուի կողմից Կարգի 45-րդ կետով սահմանված կարգով Բողոքներ քննող անձին չի տրամադրվել հայտը նախագծած ներկայացուցչի կողմից պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից սահմանված ձևով բացասական եզրակացությունը, ինչը և հիմք է հանդիսանում պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելը ոչ իրավաչափ ճանաչելուն:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին որոշումը /պայմանագրի լուծումը/ կայացվել է Կարգի և Պայմանագրի վերը նշված նորմերի խախտմաբ: Նման պայմաններում կարծում ենք, որ սույն Ընթացակարգի շրջանակներում Մասնակիցը ենթակա չէ Ցուցակում ներառման:»:

Մասնակիցը 16.11.2021թ.-ի ներկայացված դիրքորոշման լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում Երևանի քաղաքապետարանի (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետև նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ԼՕ-2021/311 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի քննության նպատակով 10.11.2021թ.-ին ժամը 14:45-ին նշանակված նիստի քննության ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բարձրացված հարցերի և նկատառումների վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. Ի պատասխան Բողոքներ քննող անձի այն նկատառմանը, որ Երևանի քաղաքապետարանի և «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի ապրիլի 23-ին կնքված ԵՔ-ԳՀԾՁԲ-21/124 համարով պետական գնման ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետև նաև՝ Պայմանագիր) թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն ծառայությունների սահմանված է 72 ժամ, այլ ոչ թե ակադեմիական ժամ, ապա ցանկանում ենք հայտնել, որ Պայմանագրի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով մատուցված ծառայությունների տևողությունը նույնպես հաշվարկվել է ակադեմիական ժամով, ինչի մասին փաստում է նաև

Երևանի քաղաքապետի աշխատակազմի անձնագրային և արխիվային գործերի բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գալոյանը (ով հանդիսանում է տվյալ Ծառայության հայտը նախագծող), իսկ Պատվիրատուն պատշաճ կերպով ընդունել է վերոնշյալ չափաբաժինների մասով մատուցված ծառայությունները համապատասխան հանձման-ընդունման միջոցով և վճարել է մատուցված ծառայության դիմաց (ապացույցները կցվում են), ինչից ելնում է, որ տեխնիկական բնութագրում /առկա անհստակությունը/ մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

2. Ի պատասխան Բողոքներ քննող անձի կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն առկայության կամ բացակայության մասին ներկայացված հարցադրամը, հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ) 110-րդ կետի համաձայն՝ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրել կազմակերպության կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը, սակայն գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին չի տրամադրել էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը: Այուամենայնիվ, եթե տրվել է բացասական եզրակացություն, ապա նույն եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պետք է տրամադրեր պատվիրատուի ղեկավարին, ով մեկ աշխատանքային օրվա ընթացքում պետք է այն տրամադրեր պայմանագիր կնքած անձին՝ այսինքն մեր կազմակերպությանը (ապացույցները կցվում են), սակայն Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի վերոնշյալ կետով սահմանված պահանջները, ինչից ելնելով պայմանագիրը միակողմանի լուծելը ոչ իրավաչափ է:»:

Վերոգրյալից ելնելով՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա պարբերությամբ նախատեսված խախտում և ամբողջությամբ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/311 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2021/311 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի և «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի միջև 29.04.2021.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/124» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համայնքային ծառայողների մասնագիտական վերապատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

iii. Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով :

iv. Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 4-րդ չափաբաժնով նախատեսված «Համայնքային ծառայողների վերապատրաստման ընդհանուր և իրավական հարցերի բնագավառ» ծառայության մատուցման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12 2021թ.-ը:

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 26.10.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի մասնակի լուծելու մասին թիվ 02/26227 համարի ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի միջև 29.04.2021 թվականին կնքած «ԵՔ-ԳՀԾՅԲ-21/124» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համայնքային ծառայողների մասնագիտական վերապատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1

հանվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի 4-րդ չափաբաժնի մասով նախատեսված է եղել համայնքային ծառայողների վերապատրաստումը ընդհանուր և իրավական հարցերի բնագավառի վերաբերյալ ծառայության մատուցումը: Համաձայն տեխնիկական բնութագրի մասնագիտական ուսուցման ծրագրի ընդհանուր տևողությունը պետք է կազմեր առնվազն 72 ժամ, սակայն մասնակցի կողմից մատուցած ծառայությունները չեն համապատասխանել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պայմաններին (դասընթացը չի գերազանցել 32 ժամը), ինչը փաստում է վերապատրաստման գործուղված աշխատակիցների բացատրագրերը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ՄՌԿ վարչության մրցույթների և ատեստավորման կազմակերպման բաժնի պետի սույն թվականի հոկտեմբերի 19-ին կատարած այցը «Մաստեր Սթայլ» ընկերություն վերապատրաստման դասընթացի ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով,ապրանքների, աշխտանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3.1 կետի «ա» ենթակետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

ՀՀ քաղաքացիական օրեսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույատրփսմ է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակիցը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի, պայմանագրի 4-րդ չափաբաժնի մասով հրաժարվել է կնքված պայմանագրից՝ համարելով այն 625.000 ՀՀ դրամի չափով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվել է ՀՀ գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Մասնակցին «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, վերջինիս տվյալները օրենքով սամանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմնին:

vi. Բողոքներ քննող անձը 18.11.2021թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/28614-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել՝ արդյոք Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/124» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում www.armeps.am համակարգի միջոցով «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կողմից ուղարկվել են հանձման-ընդունման արձանագրություններ, թե՝ ոչ: Եթե արձանագրություններն ուղարկվել են, ապա խնդրել է տրամադրել դրանց օրինակները և հայտնել, Պատվիրատուի կողմից նույն համակարգի միջոցով մատուցված ծառայության համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ դրական կամ բացասական եզրակացություն առկա է, թե՝ ոչ:

vii. Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.11.2021թ.-ի թիվ Ն/26-1/28760-2021 գրությամբ հայտնել է, որ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Վերջինս տրամադրել է գրությամբ ներկայացրած ընթացակարգի շրջանակում «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կողմից համակարգ ներբեռնած փաստաթղթերը ֆայլային տարբերակով (կցվում են), որոնց վերաբերյալ պատվիրատուի կողմից կցագրած եզրակացություններ համակարգում առկա չեն:

viii. «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կողմից www.armeps.am համակարգի միջոցով կազմվել և Պատվիրատուին է ուղարկվել պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների՝ թիվ 4 չափաբաժնով նախատեսված ընդհանուր և իրավական հարցերի բնագավառի վերաբերյալ մատուցված ծառայությունների մասին 15.10.2021թ.-ին կազմված

հանձնման-ընդունման թիվ 4 արձանագրությունը և նույն ամսաթվով կազմված թիվ հաշիվ վավերագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.11.2021թ.-ի թիվ 26/26-1/17957-2021 գրությամբ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից,

պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 110-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված

գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն.

3) եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝

ա. դրական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատում և էլեկտրոնային համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է ուղարկում հանձնման-ընդունման արձանագրությունը և եզրակացությունը, որոնք վերջինս 1 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով տրամադրում է պայմանագիր կնքած անձին,

բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համայնքային ծառայողների մասնագիտական վերապատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 4-րդ չափաբաժնով նախատեսված «Համայնքային ծառայողների վերապատրաստման ընդհանուր և իրավական հարցերի բնագավառ» ծառայության մատուցման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12 2021թ.-ը:

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր

մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի միջև 29.04.2021.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/124» ծածկագրով պետական գնման Պայմանագրով Կատարողը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 4-րդ չափաբաժնով նախատեսված «Համայնքային ծառայողների վերապատրաստման ընդհանուր և իրավական հարցերի բնագավառ» ծառայությունների մատուցումը, որի վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12 2021թ.-ը:

Պատվիրատուն հայտնել է, որ Պայմանագրի 4-րդ չափաբաժնի մասով նախատեսված է եղել համայնքային ծառայողների վերապատրաստումը ընդհանուր և իրավական հարցերի բնագավառի վերաբերյալ ծառայության մատուցումը: Համաձայն տեխնիկական բնութագրի մասնագիտական ուսուցման ծրագրի ընդհանուր տևողությունը պետք է կազմեր առնվազն 72 ժամ, սակայն ընկերության կողմից մատուցած ծառայությունները չեն համապատասխանել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պայմաններին (դասընթացը չի գերազանցել 32 ժամը), ինչը փաստում է վերապատրաստման գործուղված աշխատակիցների բացատրագրերը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ՄՌԿ վարչության մրցույթների և ատեստավորման կազմակերպման բաժնի պետի սույն թվականի հոկտեմբերի 19-ին կատարած այցը «Մաստեր Սթայլ» ընկերություն վերապատրաստման դասընթացի ընթացքում:

Պայմանագրի 2.1.3.1 կետի «ա» ենթակետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակիցը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի, պայմանագրի 4-րդ չափաբաժնի մասով հրաժարվել է կնքված պայմանագրից՝ համարելով այն 625.000 ՀՀ դրամի չափով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվել է ՀՀ գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա, ուսումնասիրելով Պատվիրատուի և Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշումները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ գործով ձեռք չի բերվել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ Մասնակցի կողմից մատուցած ծառայությունները չեն համապատասխանել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պայմաններին: Այն դեպքում, երբ դրանք ապացուցելու համար Պատվիրատուի կողմից պետք է իրականացվեր Պայմանագրի 3-րդ բաժնով սահմանված՝ ծառայությունների հանձնման և ընդունման վերաբերյալ դրույթները, այն է՝ եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում

էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված...:

Այս փաստի առկայության պարագայում միայն հնարավոր կլիներ արձանագրել Մասնակցի կողմից Պայմանագրի 2.1.3-րդ կետեով ստանձնած պարտավորությունների խախտման փաստը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով

պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.11.2021թ.-ի թիվ 26/26-1/17957-2021 գրությամբ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/311 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**